Ս. Պ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆՈՒ «ԷԼԻԶԱ» ՎԵՊԸ

Արմենակ Հայկունին արևմտահայ գրականության և հասարակական մտքի ակնառու դեմքերից է։ Նրա ստեղծագործությունը և հրապարակախոսական գործը անմիջականորեն կապվում է անցյալ դարի 50—60-ական թվականներին արևմտահայ կյանքում տեղի ունեցող քաղաքական և գեղարվեստական մտքի հախուռն հեղաբեկումների և այն նշանակալից տեղաշարժերի հետ, որոնք այնքան որոշակիորեն նշանավորեցին գրական պրոցեսի նոր շրջանը՝ զարգացման իր տենդենցներով և գրական իր նոր ուղղությամբ.

Լայն ու բազմակողմանի էր Հայկունու գործնական հետաքրքրությունների սահմանները։ Նա գրող էր, հրատարակիչ, խմբագիր, հրապարակախոս, մանկավարժ, թատերական գործիչ։

Հանդես գալով անցյալ դարի կեսերին, նա ավելի քան մեկ տասնամյակ ծառայեց հայ ժողովրդին՝ գործունեության բոլոր բնագավառներում անձնավորելով ժամանակաշրջանի հայ կյանքի իրադարձություններն ու հակասությունները՝ ամենուր հանդես գալով ազգի շահերի, նրա միասնության և ազատագրության բուռն պաշտպանությամբ։ Հայկունին միաժամանակ արևմտահայ առաջին արձակագիրներից էր։ Նրա «Էլիզա» վեպը հրատարակվել է 1861 թ., Մ. Հիսարյանի «Խոսրով և Մաքրուհի» վեպից տաս տարի հետո։ Այն արևմտահայ երկրորդ վեպն է գրված աշխարհաբար լեզվով և ժամանակակից կյանքից վերցրած թեմատիկայով։ Վեպի հրատարակության առթիվ ողջույնի և քաջալերանքի խոսքեր գրվեցին «Մեղու», «Մասիս», «Ծաղիկ». «Զեփյուռ Հայրենյաց», «Կիլիկիա» և շատ այլ պարբերականներում։ Անշուշտ, պատահական չէր վեպի հարուցած այդօրինակ հետաքրքրությունը. Եվ ոչ էլ այն պայմանավորված էր թեմատիկայի նորությամբ։ Նման ընդունելության դաղտնիքը թաքնված էր վեպում արծարծված այն գաղափարների մեջ, որոնք թեև վիպական սյուժեում մնում էին երկրորդական, բայց էականում բխում էին հեղինակի առաջ քաշած հիմնադրույթից և նպատակակետից։ Հեղինակը կարողացել էր գտնել այս բոլորի մատուցման կերպը։ Նա կարողացել էր ստեղծել նոր ժանր, որն այնքան սակավադեպ և այնքան փնտրված էր այդ շրջանում։

Ո՞րն էր վեպի գեղարվեստական արժեքը և ի՞նչն է այն նորը, էականը, որով այդ վեպը դարձել է նշանակալի։

Արտացոլելով էպոխայի պատկերը, հայ ժողովրդին առավել հուզող հարցերը, պատմական տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-պատմական երևույթները, մեր իրականության մեջ առաջին անգամ բարձրացնելով ազգային-ազատագրական շարժման գաղափարը, վեպը ստանում է իր ուրույն նշանակությունը և տեղը հայ վիպագրության մեջ։

Ակնհայտ է, որ իրականության ընկալման և ըմբռնման առանձնահատկությունները հանդես են գալիս, ոչ միայն նրանում, թե ինչպիսի երևույթներ

և իրադարձություններ են գրավում հեղինակի ուշադրությունը, այլև նրանում, թե ինչն է նա համարում էական և բնորոշ շրջապատող իրականության մեջ։

Ժողովրդի ազգային, սոցիալ-քաղաքական կացությունը 50-ական թվականներին Թուրքիայում մխիթարական չէր։ Անգթորեն ճնշվում և հետապնդվում էր ազգային զարթոնքի ամեն մի արտահայտություն։ Իսկ կյանքի նոր ձևավորվող առաջընթաց ուժերն ու տենդենցները դեռևս չէին ստացել ինքնուրույն նշանակություն[1]։

Երկրի հասարակական կյանքում տեղի էին ունենում մեծ իրադարձություններ։ Առանցքային հարց էր դառնում հասարակական տարբեր հոսանքների միջև մղվող պայքարը ազգային սահմանադրության շուրջը։ Աճում էր հեղափոխական իրադրությունը հայ կյանքում։ Այդ բանը ստիպեց Ռ. Դոանը ասպարեզ նետել թլփատված մի սահմանադրություն և անցնել դեմոկրատական ուժերի ճնշմանը։ Իսկ միջազգային կյանքում կատարվում էին սոցիալ-քաղաքական մեծ տեղաշարժեր։ Դարի առաջին քառորդից արդեն սկսվում է ազգային-ազատագրական պայքարի համաշխարհային տենդը։ Շատ երկրներ խորտակում են ֆեոդալական կացութաձևը և ազգային ճնշումը պայքարով նվաճում քաղաքական ինքնուրույնություն։

Այս երևույթը չէր կարող իր ազդեցությունը չունենալ բռնատիրական Թուրքիայում ապրող ժողովուրդների վրա։ Սարսափած ազգային և սոցիալական ճնշումներից նրանք իրենց փրկության միակ ելքը և ազատագրումը տեսնում են միայն ազգային քաղաքական պայքարի մեջ։

Ահա թե ինչու ժողովուրդների ազատագրական խնդիրը, կյանքի կենսական հարցերի պաշտպանությունը և բուռն պայքարի կոչերը կեղեքիչների դեմ դարձան այդ ժամանակաշրջանի հիմնական թեմատիկան։ Հայ ժողովրդին հուզող հարցերից ամենագլխավորը դարձավ ազգային ինքնուրույնության վերականգնման հարցը, որը 50—60-ական թվականների արևմտահայ մտայնության մեջ տիրապետող հիմնական գաղափարախոսությունն էր։

Հայկունու վեպը լույս տեսավ այն օրերին, երբ իտալական ժողովուրդը օրհասական պայքար էր մղում օտար բռնակալության լուծը թոթափելու համար։

Իտալական ժողովրդի հերոսական պայքարով ոգևորվել են ժամանակի բոլոր առաջավոր մտածողները. հայ իրականության մեջ Մ. Նալբանդյանը, Ս. Սահազիզը, Մ. Պեշիկթաշլյանը և ուրիշներ։

Իր էջերում հայ մամուլը ոգեշունչ տողեր նվիրեց Իտալիայի հերոսներին։ «Մասիսում» «Պ. Տ. Քավուր և իտալական միությունը» հոդվածում Վ. Պ. Պառնասյանը հիացմունքով խոսելով իտալական ժողովրդի և Քավուրի պայքարի մասին՝ Իտալիայի անկախության և միավորման համար, գրում է. «Իտալական միության վրա այս կարճառոտ ուսմունքն ընելն ետքը, մեր ջանքը պսակած կը համարինք, եթե մեր ազգայինք ալ սթափին իրենց թըմբրութենեն, որուն մեջ ընկած են կրոնական երկպառակութեանց հետևանքեն»։ Հայերից պահանջելով համախմբություն ազգային սահմանադրության շուրջը՝ հանուն ազգային անկախության, նա վերջացնում է. «...Մենք կը լռենք և ժամանակին հոլովմանցը կը հանձնենք այս խնդիրն հասունցնելու մեծ և արդյունավետ դործը»[2]։

1 Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, 1964, «Ներածություն», էջ 5։
2 «Մասիս», 1863, № 608։

Քաղաքական այս իրադարձությունների պայմաններում, Հայկունին անհրաժեշտ համարեց անդրադառնալ ազգային-ազատագրական շարժման խընդրին՝ ներկայացնելով այն Ղրիմի պատերազմի ֆոնի վրա։

Դեպքերը տեղի են ունենում Ղրիմի պատերազմի ժամանակ, երբ Հայկունին, որպես թարգման գտնվում էր Դանուբյան մեծ բանակում, որի զորապետն էր Սերտար Եքրեմ էոմեր փաշան։ Հազիվ դպրոցն ավարտած, նա դառնում է անգլիական զորավար քոլոնել Հայնտի թարգմանիչն ու բարեկամը։

Վեպի սկզբում, Արմենակին հանդիպում ենք Վառնայում, որտեղ նա ծանոթանում է Լելիի և նրա աղջիկ Էլիզայի հետ։ Հանդիպելով հրաշագեղ Էլիզային, Արմենակը մտերմանում և սիրում է նրան՝ կենդանի և հրաշունչ ոգևորությամբ նկարագրելով իր անկեղծ և բուռն սերը Էլիզայի նկատմամբ։ Բայց անսպասելիորեն ընդհատվում են նրանց հանդիպումները։ Արմենակը չի հասկանում, թե ինչն է իրենց բաժանման պատճառը։ Նա հուսահատության մեջ է։ Երկարատև և ծանր հոգեկան ապրումներից հետո, Գյոթեի դժբախտ դյուցազնի նման, նա դիմում է ինքնասպանության, բայց և շատ զարմանալի ու անսպասելի ազատվում Լելիի և Էլիզայի հանկարծակի, փրկարար միջամտությամբ։

Անսպասելի հանկարծամահ է լինում Լելին և մահվան մահճում Էլիզային հանձնում է Արմենակին։

Թվում է, թե վիպասանը, իր այդ եռուզեռ հոգեկան տագնապների և վայելքների մեջ, մոռացած պետք է լիներ իր պաշտոնից պահանջվող լրջությունը, բայց պարզվում է, որ նա լսում և հարգում է պարտականության ձայնը։ Դրժվարությամբ բաժանվելով Էլիզայից, Արմենակը շտապում է ռազմաճակատ, մասնակցում պաշարված Սիլիստրեի մարտերին։ Ընթերցողն այստեղ ականատես է դառնում զորաբանակների ռազմական գործողություններին, որոնք իրական նկարներ են. ամեն բերնից լսվում են կենսագրական պատմություններ, դեպքեր, արկածներ...

Արաբ Իբրահիմը պատմում է իր և Տալիլայի դժբախտ սիրո պատմությունը, որը խափանվում է չարանենգ Համիդի մեքենայությունների պատճառով։

Նույնպիսի մի պատմությամբ հանդես է գալիս Էլիզայի մորեղբայրը Մատթեոն, որի պատմությունը վեպի ամենից ուժեղ գաղափարական մասն է կազմում։ Նա պատմում է իր երիտասարդ տարիների հափշտակությունը դերասանուհի Էմիլիայի գեղով, որի հետ ամուսնանում է հիսուսյան Վիլամի վարպետ խաբեբայության շնորհիվ։ Այդ կինն իր անհավատարմությամբ կործանում է Մատթեոնի երջանկությունը և իր երեխայի ու Վիլամի հետ միասին փախչում Իսպանիա։ Հուսահատությունը Մատթեոնին ստիպում է հեռանալ Իտալիայից՝ իր սիրելի հայրենիքից և թափառել Փոքր Ասիայի հեռավոր լեռնաստաններում։ Ճանապարհորդության ընթացքում նա մոտիկից ծանոթանում է ասիական լեռնականների՝ քրդերի, եզվիտների, ասորիների, հայերի կյանքին և նկարագրում նրանց ցեղային առանձնահատուկ և բնորոշ հատկությունները։

Հանդես գալով Մատթեոյի անունից, Հայկունին կենդանի պատկերներով և իրական գույներով ուրվագծում է արևմտահայերի ծանր, ողբերգական դրությունը։ Շեղվելով նյութից, հեղինակը հաճախ խորանում է իր հայրենիքի անտերունչ և մոայլ վիճակը պատկերող նկարագրությունների մեջ։ Երբեմն

էլ, ցանկանալով վիպական գույն տալ գործին, նկարագրում է ահռելի քարայրներ՝ ուր ինքն իր ընկերներով կալանավորվում է թշնամիների կողմից և ապա հրաշագործ «զմելինով» հանկարծակի ազատվում։ Սակայն, մի փոքր ուշ, կրկին ձերբակալվում են և տարվում ավազակապետի մոտ, ուր վերջինս պատմում է իր պատմությունը։ Պարզվում է, որ նա Մատթեոյի թշնամին ու հակառակորդ Հիսուսյան Վիլամն է, մի բախտախնդիր հրեշ, որի կերպարում Հայկունին չի կարողանում թաքցնել Ալեքսանդր Դյումայի վեպերից կրած տպավորությունները։ Ավազակ ու այլասերված, բայց իրեն տանջող խղճի խայթից հուսահատված, նա միայն մեկ պարտավորություն է ուզում կատարել և որոնում է մեկին, որն էմիլիայի անձնասպանությունից առաջ Մատթեոյին հասցեագրված և իրեն հանձնված նամակը հասցնի տիրոջը։ Էմիլիային առևանգելուց հետո նա կորստյան հատակն է հասցրել նրան, բայց խղճի խայթից տանջվելով, ցանկանում է կատարել նրա վերջին հանձնարարականը։ Նամակում էմիլիան խնդրում է Մատթեոյին գտնելու իրենց կորած որդուն՝ Ռուդոլֆին և դաստիարակելու նրան առաքինության ոգով։ Մինչդեռ, Մատթեոն դեռևս նամակը ստանալուց շատ առաջ արդեն հանդիպել էր իր որդուն, որը Լելիի ամուսինը և Էլիզայի հայրն էր։ Լելին ամուսնացել էր Ռուդոլֆի հետ այն ժամանակ, երբ Մատթեոն բացակայում էր Իտալիայից, առանց ճանաչելու նրա իր եղբոր որդին լինելը։ Բայց ահա, այն ժամանակ, երբ Մատթեոն պատմում էր այս պատմությունը, անտառից լսվում են օգնության ճիչեր։ Արմենակը և նրա ընկերները շտապում են օգնության։ Խելակորույս վազելով, սարսափած Արմենակը տեսնում է իր պաշտելի Էլիզային անարգված։ Ռուդոլֆը, այդ ավազակն ու ճիվաղը, Էլիզային հանձնել էր Համիդին, առանց իմանալու նրա՝ իր աղջիկը լինելը։ Վեպը ավարտվում է անմեղ կույսի ողբերգական մահով։

Վիպական գործողությունների առանցքն այստեղ հիմնականում Արմենակի և Էլիզայի սենտիմենտալ սիրո պատմությունն է։ Սակայն սյուժետային այս հենքի վրա, Հայկունին ներկայացրել է իտալացի Մատթեոյի և էմիլիայի, արար Իբրահիմի և Տալիլայի ողբերգական սիրո պատմությունները։

Հայկունին նպատակ չի ունեցել սիրային վեպ ստեղծելու։ Վիպական տարրը ավելի երկրորդական է հանդես գալիս և ծառայում է որպես միջոց հերոսների փոխհարաբերություն ստեղծելու և հասարակական հուզող գաղափարներ արտահայտելու համար։

«Էլիզա» վեպում արտացոլված են ազգային զարթոնքի ժամանակաշրջանի բնորոշ իրադարձություններն ու խնդիրները։ Առաջին անգամ արևմտահայ գրականության մեջ, Հայկունին նկարագրում է գավառի հայ աշխատավոր գյուղացու կրած տառապանքը քուրդ և թուրք բեկերի, ավազակների ճնշման տակ։ Նա ցնցող պատկերներով է արտացոլել քրդերի և թուրքերի ջարդարարության ահավոր ծանրությունը և այն բոլոր նվաստացումներն ու չարիքները, որին ենթարկվում էր հայ ժողովուրդը։ Հեղինակի խոսքն այստեղ ուղղված ջարդարարների և նվաճողների, ժողովուրդների ստրկացնողների դեմ՝ դուրս է գալիս ազգային նեղ շրջանակներից և հնչում որպես համամարդկային պահանջ։ Նա իր ժողովրդի խաղաղասիրությունը հակադրում է նվաճողների ավերիչ ու կործանիչ ոգուն և բարձրացնում հումանիզմի գաղափարը։ «Իմ ազգս յուր անցեալ փառավոր վիճակներուն մեջ անգամ միշտ պաշտպանո-

ղական սկզբունքը կը պահեր և ոչ երբեք հարձակողական. վասն զի ան չէ թե միայն ազգասեր էր և յուր հայրենեաց որդին. այլ նաև մարդասեր էր և գիտեր ան ուրիշի մի հայրենեաց արժեքն ալ»[3]։

Ներկայացնելով հայ ժողովրդի բզկտված, հարստահարված վիճակը, Հայկունին պահանջում էր ուժերի միասնություն՝ ընդդեմ օտար բռնակալների։ «Մի՞թե, ինչպես ամեն անհատ՝ անանկ ալ ամեն ազգ,—բողոքում էր նա,— իրավունք չունի երկրիս վրայ պաշտպանելու իր սեփական տեղը, և հոն երջանկաբար ապրելու բոլորովին անկախ որևէ ուրիշ հարստահարող բռնաբարող բազուկե»[4]։

Այստեղ կարևորը և առանցքային ժողովրդի ազգային ինքնագիտակցության և քաղաքական ակտիվության բարձրացման գաղափարն է։ Սա է հնչում վեպում սկզբից մինչև վերջ։

Հեղինակի վրա ցնցող ազդեցություն էր թողել XIX դարի կեսերին իտալական ժողովրդի մղած ազատագրական պայքարը՝ օտար բռնակալների դեմ։ Դա ժողովուրդների պատմության մեջ անցյալ դարում ամենանշանակալից երևույթներից էր, երբ հարստահարված և խոշտանգված իտալական ժողովուրդը թոթափում էր օտարի բռնակալական լուծը և երկրում վերականգնում պետական անկախությունը։

Հայկունին ոգևորված էր Գարիբալդու գլխավորած ազատագրական շարժումով։ Նա պատմական այդ իրադարձությունները ազատագրական պայքարի կենդանի օրինակ էր ներկայացնում հայ ժողովրդին, որի կյանքում կենսական էր դարձել արդեն ազգային ազատագրության հարցը։ Հեղինակն առաջադրված գաղափարախոսությունը արտահայտում է իտալացի Մատթեոյի կերպարի միջոցով։ Վասարանդի հերոսի միակ և վերջին ցանկությունն էր տեսնել հայրենիքը ազատ ու անկախ օտար բռնակալներից ու զավթիչներից։ Որքան ծանր է նվիրական հայրենիքի ողբերգությունը, նրա արյունոտ ներկան. «Ա՜հ, Իտալիա, անուշ Իտալիա, ո՞վ կրնար հուսալ բնավ, որ քու նախնի փառացդ մթնոլորտը այսպես պիտի խավարի, ո՞վ կրնար խորհիլ բնավ որ թագավորական գահդ պարապ պիտի մնա...»[5]։

Շոշափելով ազգային ազատագրության հարցը, Հայկունին պետք է նշել ճակատագրական այդ խնդրի լուծման ուղիները։ Սակայն ազատագրական պայքարը նրա մոտ չստացավ իր վերջնական ձևակերպումը, չհանգեց հեղափոխական գաղափարին։ Այն հայացքները, որ նա պաշտպանել է «Էլիզա» վեպում, նրա մոտ մնացել են մինչև իր մահը[6]։ Նա ազատագրական վերջնական հաղթանակը կապում էր միայն եվրոպական պետությունների և հատկապես Անգլիայի ժամանակ օգնության և միջամտության հետ։

Ըստ Հայկունու, կարևորը ժողովրդի ինքնագիտակցության արթնացումն էր, մի խնդիր, որը քաղաքական, տնտեսական խնդիրների լուծման կարևոր նախապայմաններից մեկն էր համարում նա։ Այդ էր պատճառը, որ նա ծաղրանում էր քրիստոնեական հնազանդության ոգու դեմ և առաջ էր քաշում «Բշնամու հարվածին հարվածով պատասխանելու պահանջը»։

---

3 «Էլիզա», Զմյուռնիա, 1862, էջ 141։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում, էջ 114—116։

6 Գ. Մ ա հ փ ա ն յ ա ն. Արմենակ Հայկունի. «Տեղեկագիր». ԳԱ հաս. գիտ., 1955, № 1, էջ 54։

Նրա հերոսներից մեկը ասում է.

«Մինչ ե՞րբ պիտի մենք մեր աշխատութեան պտուղը, մեր իրավունքը անոնց տանք, մինչև ե՞րբ պիտի հարվածեն մեզ և մենք լռենք. մինչև ե՞րբ այս վատ և անարգելի կացութեան մեջ պիտի թափառենք. ինչո՞ւ զենք չառնենք անոնց դեմ, ինչո՞ւ չպատժենք զանոնց... Ես իմ կողմանես պիտի կռվեմ անոնց հետ... ով որ կուզե թող ընկերանա ինձի»[7]։ Ժողովուրդը վայրենաբար կոտորվում է թուրք և քուրդ չարդարար հրոսակախմբերի կողմից, բզկտվում բարբարոսների կրունկների տակ, իսկ քրիստոնեական գաղափարախոսությունը քարոզում է հնազանդություն և համբերություն՝ բթացնելով ժողովրդի ազատասիրական ձգտումները, պայքարի ոգին։

Ո՞րն է ելքը։ Ո՞րտեղից է բխում ժողովրդի ստրկական համակերպվածությունը։ «Որդեակներս, գիտելի է ինձ, որ եթե մենք ուզենք կարող ենք այս քուրտերուն երկու հազարին դեմ դնել և հաղթել. բայց որովհետև Քրիստոնեա ենք՝ հարկ է ուրեմն մեկ անոնց հետ չի պատերազմիլ, ուզածնին տալ և կեանքներնիս և պատիվնիս ազատել»[8]։ Այսպիսի կրոնական հնազանդությունն է, որ արմատավորում է անտարբերություն սոցիալ-քաղաքական կյանքի նկատմամբ։ Քրիստոնեական քարոզով նա մթագնում է մարդկանց գիտակցությունը և ստիպում նրանց անմռունչ կրել բռնակալի կամայականությունները։ Կորչում է հավատը, վստահությունը սեփական ուժերի գիտակցության նկատմամբ։ Մարդիկ դառնում են կամազուրկ և անընդունակ պայքարի միջոցով ձեռք բերելու այնքան թանկ անկախությունն ու ազատությունը, անձնական ունեցվածքը պաշտպանելու իրավունքը։ Դարավոր ստրկությունը մեռցրել է մարդկանց մեջ անձնազոհության և հայրենասիրության ոգին։ «Ելան ամենքն ալ, բայց վրանին հոգի չիկար, ամենքն ալ գունաթափ եղած էին, և շարժելու անկարող, իզուր կքաջալերեր արիասիրտ երիտասարդը, իզուր կաշխատեր համոզել զանոնք որ պատերազմիլ հարկ է Քրիստոնեից այսպիսի պարագայի մեջ»[9]։

Վեպում որոշակի հանդես է գալիս երկու տենդենց. մի կողմից բռնությունը խորտակելու վճռականություն, ըմբոստություն, իսկ մյուս կողմից՝ քրիստոնեական համակերպվող, թույլ հոգեբանություն։ Սակայն առանձին վճռական ուժերը. բռնությունը խորտակելու համար, դեռևս շատ քիչ են որոշելու ազատագրության պայքարի ելքը։ Անհրաժեշտ էր կազմակերպել ժողովրդական մասսաներին, արթնացնել նրա ազգային ինքնագիտակցությունը թոթափելու համար ընդարմության մշուշը։ Հայկունին չի դնում դինված ապրստամբության պահանջ. տվյալ դեպքում անհրաժեշտ է ինքնապաշտպանություն ուսանել, որպեսզի ժողովուրդը չենթարկվի բռնակալ և բարբարոս տիրապետողի բնաջնջման վտանգին։ Գոյության կռվում պետք է կարողանալ տիրապետել զենքին, սովորել ինքնապաշտպանություն, որպեսզի ազատ լինել բարբարոսների ֆիզիկական բնաջնջման վտանգից։

Դուրս գալով քրիստոնեության ընդարմացնող վարդապետության դեմ, Հայկունին, սակայն, չի հանգում կրոնի ժխտմանը։ Տվյալ դեպքում նրա քննադատությունն ուղղված էր այն բանին, որ կրոնը և եկեղեցին օգնեն ժողո-

7 «Էլիզա», 1861, էջ 64։
8 Նույն տեղում, էջ 139։
9 «Էլիզա», 1862, էջ 139։

վրրդին ազատագրական շարժման ընթացքում և նպաստեն հասարակական պրոգրեսի ընդհանուր նպատակին։ Հետագայում արդեն՝ իր հրապարակախոսական հոդվածներում, նա ժողովրդին բացահայտ դուրս էր բերում կրոնի ազդեցությունից և հանում է նրա դեմ։ 60-ական թվականներից հետո Հայկունին մամուլի էջերում և առանձին աշխատությամբ հանդես եկավ կղերականության ամենասուր քննադատությամբ՝ Սվաճյանի, Չիլինկարյանի և արևմտահայ մյուս դեմոկրատների շարքերում՝ թերևս հանդիսանալով նրանցից ամենահետևողականը։

«Էլիզա»-ում, Հայկունին, քրդերի, եզիդիների և ասորիների մասին խոսելիս բացահայտորեն դեմ է դուրս գալիս Արևելքի փոքր ժողովուրդների նրկատմամբ՝ քրիստոնեական քողի տակ տարվող պապական քաղաքականության նվաճողական ձգտումներին։ Պահպանելով իրենց կրոնն ու ավանդույթը, լեռնականները պապականությանը դիմադրում են բոլոր միջոցներով և ուժերով։ «Ըսե քու տիրոջդ,—ասում է նրանց պատրիարքը պապական քարոզիչին, թե ես բնավ Հռովմա աթոռին չի պիտի հնազանդիմ, և թե որ իմ բոլոր ժողովուրդս համոզես, գիտցիր որ ես միայն պիտի ազատ լինիմ այդ համոզումե, ավելի կընտրեմ տեվրիշ կամ քուրտի մոլլա մը լինիլ, քան թե հռոմեական աթոռին հպատակ լինելով վատանալ»[10]։

Հայկունին դատապարտում էր միսիոներության ռեակցիոն հակաժողովրդական էությունը, որը փորձում էր ամենաստոր ձևերով ու մեթոդներով իրականացնել իր քաղաքական նպատակները։ Հեղինակն այդ ռեակցիոն շարժման և կաթոլիկ քարոզիչների գործունեության մեջ տեսնում էր հայ ժողովրդի ազգային միասնությանն սպառնացող վտանգ։ Կաթոլիկ պապականության մերկացումը վեպում տրվում է Հիսուսյան աբեղա հայր Վիլամի կերպարի միջոցով։ Մի շարք գեղարվեստական պատկերներում խիստ բացասական և մերկացնող գծերով արտացոլված է նրա ճիվաղային, ոչ մարդկային էությունը։ Վերացված է Վիլամի համար ամեն մի սրբություն, չկան թույլատրելի, անթույլատրելի սահմաններ։ Իր իսկ խոսքերով, նա բացահայտում է միսիոների բնութագիրը և էությունը։ «Ես իտալացի մի եմ անհայտ ծնողաց զավակը,—ասում է նա,—և երբ ինքզինքս ճանչընալ սկսա՝ ես հիսուսեանց մեկ վանքին մեջն էի... ուր առի այն ամեն կրթությունները, որոնք անշուշտ հարկ են հիսուսյան կրոնավորի մը սուտ խոսել, երդում ընել, կեղծել, պատրվակել, շողոքորթել, բարեկամական երևույթով թշնամություններ, գողություններ և զրկանքներ ընել, հրեշտակի ամեն արտաքին ցույցերով սատանայի մը ամենեն նոխկալի գործերը ընել...»[11]։

Հայկունին առաջ է բաշում այն գաղափարը, որ ազգային ատելություն և երկպառակություն առաջացնող կրոնական դավանությունները շատ հեռու են իրենց իսկ քարոզած մարդասիրությունից։ Ավելի ուշ, հեղինակի պայքարը միսիոներության, բողոքականության դեմ ստանում է նպատակասլաց և հրապարակային բնույթ՝ դուրս գալով միսիոներության սահմաններից և ուղղվում կրոնի ու եկեղեցու ամբողջ սիստեմի դեմ։

Հեղինակը ազգային-քաղաքական ազատագրության կարևորագույն խընդիր է համարում կրթության և լուսավորության տարածումը։ Նա գտնում է,

10 «Էլիզա», 1862, էջ 158։
11 Նույն տեղում, էջ 171։

որ միայն այդ միջոցով հնարավոր է ժողովրդին սթավլեցնել դարերի ընդարմությունից և բերել քաղաքական ինքնագիտակցության։ Նա գրում է. «...որ ազգի մը պակասությունները բնական չեն կրնար լինիլ, այլ կամ պարագայից բերմունքեն և կամ ճշմարիտ կրթության պակասութենեն առաջ եկած վրիպումներեն»[12]։

Այսպիսի իմաստասիրական սկզբունքով, Հայկունու իդեալ հերոսներից մեկը ասում է. «Եթե իմ ազգս իր ոչ բնական վրիպմանց տակ ինկավ պարագաներու դժնդակ բերմունքե և կրթութեան պակասութենե և ասանկով աշխարհիս վրա խիստ թշվառ ազգ մի եղավ, բայց անհույս չեմ որ օր մի պիտի գա, և պարագաներու հաջող բերմունքը և կրթությունը գայն ետ պահե յուր կործանիչ վրիպումներեն և անանկով երկրիս վրա երջանիկ ազգ մը լինի...»[13]։ Հեղինակը լուսավորությունը ազատագրության հասնելու առաջին նախադրյալն է համարում, չհասկանալով, որ ստրկության և աղքատության մեջ չկա և չի կարող լինել լուսավորություն[14]։

Լուսավորիչներին հատուկ սոցիալ-քաղաքական պատրանքներով, նա գտնում էր, որ լուսավորությունը վերջ կդնի ամեն տեսակ բռնության և կբերի ազատություն և հավասարություն։ Հայկունին անկեղծորեն հավատում էր, որ «օրհնեալ կրթութեան ներքո» կարելի էր հասնել ազգային ազատագրության։ Նրան այս շրջանում զբաղեցնում էր ոչ թե սոցիալական, այլ ազգային ինքնուրույնություն ձեռք բերելու հարցը։ Նա ազգային հարցի լուծման մեջ էր տեսնում սոցիալական խնդրի իրագործումը, որը միանգամայն հասկանալի էր Թուրքիայի բարբարոսական բռնապետության պայմաններում։ Սակայն վեպում, ազգային ինքնուրույնության հասնելու համար, առաջին պլանում դրվում է ոչ թե լուսավորության, այլ քաղաքական պայքարի նախաձեռնումը։ Ազգային ինքնագիտակցության բարձրացումն է որոշում ազգի ինքնորոշման և ազատագրության ուղին։ Եվ այդ միտումով էլ Հայկունու հերոսներից Օհանը պատմում և ծանոթացնում է իր հայրենիքի փառավոր անցյալի և հայ ժողովրդի քաղաքական վիճակի ամբողջ ողբերգությունը։ Սգալով անցյալի շիջած փառքը և ավեր ներկան, նա ժամանակակից սերնդին կոնկրետ մարտական առաջադրանքներ չի տալիս, չի նշում թշնամու դեմ ժողովրդական ուժերի համախմբման, ազատագրական պայքարի ուղին։

Տնտեսական ծանր դրությունը մասսաներին մղում է դեպի օտարություն և անհայտություն։ Հեղինակը ցավով է նկարագրում հայրենի հյուղից հալածված պանդուխտ հայի վիճակը՝ թուրք բարբարոս ռեժիմի և Արևմտահայաստանում ծավալված հարստահարումների այն ողբերգական դրությունը, որը տանում է ժողովրդին դեպի տնտեսական քայքայում։ «Չէի կարող ես ալ Օհանեսի հետ շարտասվել,—ասում է Մատթեոն,—երբ կշրջեի այն երկիրները, որոնք կարծես իրենցմե երես դարձնելով՝ հեռացող զավակներուն ետեվեն կը պոռային պաղատելով, որ զիրենք այսպես երեսի վրա չիթողուն ապարդյուն, և չերթան հեռի երկիրներ տարիներով բեռնակրություն և ասոր նման նվաստ և վատ ծառայություններ ընելու»[15]։ Հայկունին չէր կարող

12 Նույն տեղում, էջ 161։
13 Նույն տեղում։
14 Տե՛ս Մ. Նալբանդյան, Երկեր, հ. 3, էջ 52։
15 Նույն տեղում, էջ 163։

չնկատել պանդխտության չարաղետ կողմը՝ երկրի տնտեսական թուլացումն ու ամայացումը։

Բայց արդյո՞ք ազգային հալածանքն ու ճնշումն էր միակ պատճառը երկրի նման ամայացման։ Իհարկե, ոչ։ Հայկունու հայեցողությունը թույլ չի տվել նրան տեսնելու նահապետական գյուղի կործանման, նրա ողբերգության մյուս կարևոր կողմը՝ ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը, գյուղատնտեսության քայքայումը և սարսափելի ծանր հարկային սիստեմի գոյությունը օսմանյան Թուրքիայում։

Բայց ո՞րն է հայ ժողովրդի ողբերգությունը, նրա անկախության կործանման պատճառը։ Ինչո՞ւ նա բզկտվում է այլ ցեղերի վայրենի կրնկի տակ Հայկունու պատմագիտական հայեցակետը բխում է այն մտայնությունից, թե Հայաստանի անկման հիմնական և միակ պատճառը ներազգային պառակտումներն էին։ Դրա համար էլ նա կատաղի պայքարի է ելնում ընդդեմ ազգային անմիաբանության և հանդես է գալիս ժողովրդի ինքնագիտակցության բարձրացման, համազգային միության, համախմբվածության բուռն պաշտպանությամբ։

Հեղինակը հիացմունքով է խոսում զեյթունցիների անառիկ դիրքի, սովորույթների, աշխատանքի բնույթի և անվեհեր ու քաջարի ոգու մասին։

Պատահական չեն Զեյթունի տեղագրական և կենցաղային այդքան մանրամասն նկարագրությունները վեպում։ Պատմական այս շրջանում և դրանից հետո էլ Զեյթունը Արևմտահայաստանում դիտվում էր որպես հայ ժողովրդի դյուցազնական ոգու անառիկ օրրան։ Էրզրումի, Մարաշի և Հայաստանի այլ քաղաքների ամայությանը Հայկունին հակադրում է Զեյթունի ազատ ու անկախ, բարեբեր կյանքը՝ զեյթունցու ազատամիտ և քաջարի ոգու մեջ տեսնելով նրա ազատության գլխավոր երաշխիքը։ Այդ լեռնաբնակների ըմբոստ ոգին օրինակ է Հայաստանի զավակների համար՝ պայքարով նվաճելու իր սեփական իրավունքը։ Ահա թե ինչու, դրվատելով հայերի քաջությունը, Հայկունին, որպես ազատագրական շարժման կարևոր նախապայման, բարձրացնում էր ազգային միասնության գաղափարը։

Հեղինակը, ժողովրդի տնտեսական անապահով վիճակից դուրս գալու միակ ելքը գտնում էր երկրագործության մեջ, որի հաղթանակին կարելի էր հասնել միայն ազգային միավորման միջոցով։ «Հայերը եթե միաբանությունը սիրեին և փոխանակ աշխարհիս չորս կողմը ցրվելու՝ հոս բնակեին, և իրենց աշխատասիրությամբը սա հողերը գործեին, արդյոք ի՞նչ երջանիկ երկիր մը պիտի լիներ այս...»[16]։

Ըստ Հայկունու, հողի մշակումը ազգի տնտեսական վիճակի ապահովման և ազգային ինքնուրույնության պահպանման կտրուկ զենքն է։

Թեև ուղղակի առումով հեղինակը ոչ մի քաղաքական հարց չի շոշափում, բայց ակնհայտ է, որ ժողովրդի նյութական զարգացման հեռանկարը պարզելով, նա չի անտեսում նաև ժողովրդի քաղաքական անազատ վիճակը՝ առաջարկելով նյութական կյանքի ապահովության միակ հնարավոր ու հուսալի միջոցի՝ երկրագործության գործադրումը։

Հայկունին հայ ժողովրդի ազատագրության խնդիրը կապում է տնտեսական պրոբլեմի լուծման, ազգային-ազատագրական պայքարի հետ, որը հե-

16 Նույն տեղում, էջ 167։

տագայում ավելի խորհրդանշում է իր հրապարակագրության մեջ։ Տնտեսական և ազգային միավորման խնդրի լուծումը նրա մոտ հանգում է Նալբանդյանի այն մտքին, թե՝ «երբ որ ազգ կազմող անհատների մեծագույն մասը պարապի երկրագործությամբ և առհասարակ գյուղական տնտեսությամբ, այն ժամանակ այն ազգի ընդհանրությունը հարուստ և ապահովյալ կլինի որովհետև նրա հիմքը դրված է բնականապես և բնության վերա»[1].

Սակայն, վեպում չի նշված հողը ժողովրդի տնտեսական բարգավաճման աղբյուր դարձնելու ուղիների մասին։ Հայկունին չի ըմբռնում երկրագործության զարդացումն արգելակող կարևոր ազդակները՝ հարցի հասարակական քաղաքական կողմը։ Նա չի հասկանում, որ այդ կարևորագույն խնդրի իրագործման անհնարինությունը բխում էր ֆեոդալական Թուրքիայի հետամնաց և բռնատիրական էությունից։

«Էլիզան» արևմտահայ գրականության մեջ առաջին քաղաքական-ռոմանտիկական վեպն է, ուր հեղինակը արտացոլել է ազատագրական շարժման իդեան և գեղարվեստական ձևի մեջ շարադրել իր տեսակետները կրթության, լուսավորության, հոգևորականության, կրոնի և այլ հարցերի վերաբերյալ։ Այս մոմենտը որոշակի կերպով բարձրացնում է վեպի գաղափարական արժեքը, իսկ վեպի հրապարակախոսական, քաղաքական բնույթը պայմանավորվում և անմիջականորեն կապվում է Հայկունու հասարակական գործունեության՝ քաղաքական հրապարակախոսության հետ։

Բազմաթիվ կերպարների նկարագրությունը, սյուժետային հանգույցների ստեղծումն ու լուծումը վկայում են Հայկունու գրական ունակությունների մասին։ Ճիշտ է, արկածային վեպի տարրերը և սյուժեի բազմապլանայնությունը խոչընդոտում և խանգարում են վեպի գեղարվեստական ամբողջականությանը, սակայն իբրև նորույթ ժանրային և գաղափարական իմաստով, վեպն իր տեղն ունի 50—60-ական թվականների արևմտահայ արձակի պատմության մեջ։

---

[1] Մ. Նալբանդյան, Երկեր, հ. 3, էջ 47։